



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

<< ----->> << ----->> 2020թ.

N -----

**<<Հանրային լրագրության ակումբ>>-ի
լրագրող՝ Սոֆի Թովմասյանին**

Հարգելի տիկին Թովմասյան

Ի պատասխան Ձեր՝ 18.12.2020թ. ՀՀ Արմավիրի մարզպետարան հասցեագրված գրության, տեղեկացվում է, որ Երկրի մակարդակով կորոնավիրուսային վարակի բերովի դեպքով/դեպքերով (COVID-19) պայմանավորված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 12.03.2020թ. N ՍՊ/15.2/7053-2020 հանձնարարականի համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետի 13.03.2020թ. N ՄՈ/78-2020 որոշմամբ ստեղծվել է կորոնավիրուսային վարակի բերովի դեպքով/դեպքերով (COVID-19) պայմանավորված արտակարգ իրավիճակների հանձնաժողով և 16.03.2020թ. N ՄՈ/82-2020 որոշմամբ մարզի մակարդակով կորոնավիրուսային վարակի բերովի դեպքով/դեպքերով (COVID-19) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման պլան:

Հանձնաժողովի կողմից մշտապես վերահսկվել է մարզպետարանի ենթակայությամբ գործող բժշկական կազմակերպություններում, ինչպես նաև համայնքներում ձևավորված մասնագիտական թիմերի աշխատանքները, տրվել են իրազեկման ուղեցույցներ՝ նոր կորոնավիրուսային վարակի տարածումը կանխելու համար կանոնների վերաբերյալ (բուժհաստատություններին, համայնքներին, դպրոցներին):

ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի մարզային մասնաճյուղի մասնագետների հետ համատեղ համապատասխան բուժաշխատողների մասնակցությամբ կազմակերպվել են սեմինարներ-պարապմունքներ:

Մշակվել է գործողությունների պլան՝ համայնքների ներգրավածությամբ, կորոնավիրուսային վարակի հետ կապված ռիսկերի գնահատմամբ:

Ապահովվել է տեղեկատվության փոխանակումը բոլոր շահագրգիռ կողմերի միջև: Տեղեկատվությունը կանոնավոր կերպով հրապարակվել է մարզպետարանի պաշտոնական կայքում, մարզպետարանի և մարզպետի ֆեյսբուքյան էջերում, ինչպես նաև պարբերաբար անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրվել ՋԼՄ-ներին:

Միաժամանակ տեղեկացվում է նաև, որ պարբերաբար կատարվում են ՀՀ առողջապահության, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններից ստացված բոլոր հանձնարարականները:

Հարգանքով՝

Հ. Մաթևոսյան

25.12.2020



VERIFIED OCSP 25.12.2020 10:20:48 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Կապ՝ Հ. Հարությունյան
Ա. Պողոսյան
Հեռ. 0237/2-42-39

